էր զվայրն և չէր ումեք մերձենալ առ նա: Եւ դարձաւ Թագաւորն առ Ճէքսն և առ Թոմլինսըն և ասէ ցնոսա. «Ձեզ միայն իցէ լսել ձայնիս, ապա առ ձեզ զբանս իմ դարձուցանեմ»: և կարճ 'ի կարճոյ խօսեցաւ առ նոսա, զոր պատրաստեալ ինչ էր յառաջագոյն, ծանր իմն հանդարտութեամբ ցուցանելով՝ եթէ միակ պատճառ աղխից ժողովրդեանն էր արհամարհութիւն իրաւանց արքայի, և թէ չէր արժան ժողովրդեան խառնել յիրս անդ պետութեան, և զի 'ի սոյն ևեթ պայման մարթ էր աշխարհին գտանել 'ի խաղաղութիւն իւր և յազատութիւն: Եւ մինչդեռ խօսէր նա, մերձեցաւ ոմն 'ի տապարն. դարձաւ առ նա Թագաւորն և ասէ. «Մի՛ վնասեր տապարիդ, զի մի՛ չար ևս ինձ պատահիցէ»: Յաւարտ խօսիցն այլ ոմն դարձեալ մօտ առ տապարն մատեաւ. և Թագաւորին կրկնեալ անդրէն երկիւղագին ձայնիւ և ասէ. «Զգուշացի՛ր տապարիդ. զգուշացիր տապարիդ»: Անշշունչ և անբարբառ լռութիւն ունէր զվայրն բովանդակ. և Թագաւորն եդ 'ի գլուխ իւր գլխանոց ինչ մետաքսեայ. և դարձեալ ցդահիճն ասէ. «Մի՞թէ խո՞չ իցեն քեզ հերքս իմ»: Պատասխանի ետ խոնարհութեամբ և ասէ այրն. «Աղաչեմ զքեզ, տէր, զի ընդ գլխանոցաւդ զետեղիցես զդոսա»: Եւ ամփոփեաց արքայ՝ օգնելով և եպիսկոպոսին: Ասէ ցնա Թագաւորն. «Յիմ կոյս են արդարութիւն և Աստուած ամենողորմն»: Ասէ ցնա Ճէքսըն. «Այո տէր. քայլ մի ևեթ մնայ քեզ անցանել, որ թէպէտ լի է աշխիւ և անձկութեամբ, այլ սակայն և սակաւավախճան ևս է. այլ և այն յուշ լիցի քեզ, արքայ, զի զմեծ իմն ճանապարհ գործիցես դովաւ յերկրէ յերկինս»:

Թագաւորն ասէ. «Յապականացուէս յանապականն անցանեմ Թագաւորութիւն, ուր և ոչ մի ինչ կայցէ երկիւղ»: Եւ դարձեալ առ դահիճն ասէ. «Զխո՞րդ կայցեն հերք գլխոյս»: Եւ հանեալ 'ի բաց զվերարկուն և զնշան սրբոյն Գէորգայ ետ ցեպիսկոպոսն և ասէ. «Յիշեսջիր զիս»: Մերկացաւ ապա 'ի զգեստուցն և արկաւ անդրէն զվերարկուն, և զանկն 'ի կոճղն դարձուցեալ ասէ ցդահիճն. «Տե՛ս զի իցէ դա հաստատուն»: և նա ասէ. «Հաստատուն է տէր իմ»: Ասէ Թագաւորն. «Առ սակաւ մի կամ ես յաղօթս, և յորժամ ձգեցից զձեռն իմ, յայնժամ...»: Եւ ժողովեալ զանձն առաց բանս ինչ դաշն ձայնիւ, ամբարձ զաչս իւր յերկինս, և 'ի ծունր իջեալ՝ եդ զգլուխ իւր 'ի վերայ փայտին, և դահճին բուռն հարեալ զհերացն զի ընդ գլխանոցաւն արկանիցէ, թուեցաւ Թագաւորին եթէ կամէր նա հարկանել, և ասէ. «Կաց մնա հրամանիս»: և նա ասէ. «Այո՛ տէր, հրամանիդ քո մնամ»: Սուղ ինչ 'ի վերայ անցեալ՝ ձգեաց արքայ զձեռս իւր. եհար անդէն դահիճն, և 'ի մի յայն հարուած անկաւ գլուխն 'ի գետին. զոր առաջի տարեալ ժողովրդեան և ասէ. «Ահաւադիկ գլուխ մատնչին»: Եւ խուլ իմն և երկարաձև հեծութիւնք հնչեցին ընդ Ուայթ-Հոլ: Բազումք 'ի ժողովրդենէն անկանէին 'ի տեղի սպանութեանն, թաթաւել զթաշկինակս իւրեանց յարիւն արքունի: Գունդք երկու հեծելազօրաց անդր հասեալք, ընդ կրկին առաջս զամբոխն 'ի բաց արձակեցին: Իբրև ամենեքեան գնացին, բարձաւ մարմին արքային, և եդաւ 'ի դագաղս: Կամք եղեն Քրոմուելայ տեսանել զնա, և ուշի ուշով զննեալ զմարմինն, ամբարձ ինքնին զգլուխն, իբրու տեսանել եթէ արդարև անջատեա՞լ իցէ յիրանէն, և ասէ. «Վայելչակազմ է յոյժ մարմինս, և ցուցանէ եթէ երկայնօրեայ լինելոց էր սա 'ի կեանս իւրում»:

ՏՆՏԵՍԱԿԱՆՔ

ՃԱՐՏԱՐՈՒԹԻՒՆ

Ե. Կաթնարանի մը վրայ ըլլալու ընդհանուր խնամքը:

Գիւղական տնտեսութեան մէջ աւելի անդադար խնամքով մտադրութիւն կը պահանջէ կաթնարանը. որուն մէջի ամաններէն միայն մէկը թէ որ անհոգութեամբ աղտոտ թողուի, կամ թէ որ կաթնարանը միշտ ինչպէս որ պէտք է մաքուր չպահուի և խառնափնդոր թողուի. և ուրիշ անթիւ պզտիկ գիտելու հարկաւոր եղածները չհոգացուի, կաթին շատը կ'անպիտանանայ, և կամ ընդհանրապէս աղէկ կաթ չառնուիր: Եւ այս հոգն ու մտադրութիւնը միշտ ամէն օր պէտք է որ ըլլայ. և հարկ է որ գիւղատէրը իր ընտանիքովը այս բանիս հոգն ունենայ, գիտնալով որ վարձուոր մշակներու ձեռք թողլով չկրնար ըլլալ:

Հոլանտացիք այս բանիս մէջ խիստ զգուշաւոր են և շատ մաքուր կը պահեն կաթնարաննին. և ամենևին տարակոյս չկայ որ Հոլանտայի կարագին և պանրոյն ազնիւ ըլլալուն պատճառն այս է: Անոր համար պէտք է գիտնալ որ աղէկ կարագ և պանիր հանելու համար՝ արհեստը աղէկ գիտնալը բաւական չէ, այլ աղէկ ընտիր ընելու հոգն ալ պէտք է ունենալ:

Կաթնարանին օդոյ: Կաթնարանին կարևոր գիտելու մէկ բանն ալ է օդոյն բարեխառնութիւնը, որ պէտք է ջանալ միակերպ պահելու՝ ըստ կարի ամառն ու ձմեռը. որ պէտք է ըլլայ 8 կամ 10 աստիճան Ռէօմիւրի. այս աստիճանի օդոյն մէջ սերը աղէկ կը բաժնուի կաթէն: Անկից աւելի տաք եղած

ատեն կաթը շուտով կը թթուի և կը մակարդի և խիստ բարակ կ'ըլլայ երեսի սերը ։ Իսկ եթէ աւելի ցուրտ ըլլայ, սերը դժուարաւ կը բաժնուի և կծու համ մը կ'ունենայ, և կարագն ալ ազնիւ չըլլար, անոր համար ձմեռուան եղանակին մէջ 8, կամ 10 աստիճանէն վար թող պէտք չէ տալ որ իջնայ ։

Բարեխառնութիւնը կանոնաւոր ըլլալու համար ջերմաչափ կը գործածուի ։ Ձմեռուան մէջ ամէն կարևոր զգուշութիւններն ընելէն ետև՝ երբ աստիճանը տասնէն վար կ'իջնայ, պէտք է տաքցընել կաթնարանը՝ մէջը զետեղած խողովակներով, որոնց մէջ տաք ջուր կը քալեցընեն և կամ գոլորշիք. և կամ սնտուկ մը կամ տակառ մը մէջը եփ ջուր լեցուցած ու աղէկ մը գոցած կաթնարանին մէջ կը բերեն ։ Կրնայ նաև բերուիլ աղիւս կամ քար կարմրցուցած՝ ու հետզհետէ փոխել. բայց պէտք է զգուշանալ բաց վառարան կամ կրակ բերելէն, որով օդը կ'ապականի և թէ մարդկան և թէ կաթին կը վնասէ ։ Իսկ ամառը եթէ աստիճանը տասուերկուքէն վեր ելլէ՝ ցրցքնելով ջուր կը վազցընեն կաթնարանին մէջ. կ'ըլլայ նաև միայն յատակը ջուր զարնելով ։ Պէտք է խիստ զգուշանալ որ չըլլայ թէ օդոյն բարեխառնութիւնը յանկարծական փոփոխութիւն կրէ ։ Արդեսեան կամ բնական ջրհոր մը կաթնարանին մօտ ունենալը խիստ օգտակար է, որոնց ջուրը ամառ ձմեռ 12 աստիճանի բարեխառնութիւն ունի. անով կրնայ կաթնարանը զով պահուիլ ։

Խոնաւութիւն օդոյն խիստ վնասակար է կաթին. սերը դեռ չզատուած ժամանակէն առաջ կը մակարդուի ։ Ասկից զգուշանալու մէկ հատիկ հնարքն է բոլոր յատակը պաղ ջուր զարնել, և աղէկ մը գոցել բոլոր դռներն ու պատուհանները ։

Մաքրութեան խնամք չէ թէ միայն ամենահարկաւոր է կաթնարանին մէջ, այլ և առաջին պահանջուած գործքն է կաթնեղէնին աղէկութեանը համար. վասն զի որչափ ալ աղէկ պարարտ կովեր ունենաս և զանոնք աղէկ սնուցանես, թէ որ կաթնարանդ ինչպէս որ պէտք է մաքուր չես պահեր, միշտ բերքդ կ'ըլլայ ստորին աստիճանի. կաթը խիստ դիւրազգաց հեղանիւթ մըն է. քիչ մը գոլորշիքէ և քիչ մը աղտեղութենէ կրնայ աւրուիլ. անոր համար կաթնարանի մը մաքրութեան համար ըլլալու ծախքին ամենևին խնայութիւն պէտք չէ ընել ։ Մէկ մաքրութեան համար պէտք եղածներն են,

Ա. Յաճախ և առատ ջրով լուացումն ։ Ամէն օր անգամ մը պէտք է լուալ բոլոր կաթնարանը մաքուր և պաղ ջրով. և զայս պէտք է կրկնել ամէն անգամ որ գործք մը ընելու ատեն կաթ կամ շիճուկ կամ մակարդ և կամ սեր կը թափի տախտակամածներուն վրայ ։ Այս լուացմունքները պէտք է ընել առատ ջրով. և աղտոտած տեղուանքը աւելով կամ թաց լաթով շփելով ։ Իսկ ամանները շփելու է յարդով կամ եղինձով բարակ աւազ կամ մոխիր մէջը դրած ։

Բ. Ցամաքեցուցումն քամիով կաթնարանին խիստ հարկաւոր է. վասն զի փորձուած է որ այն լուացուած ջրերուն գոլորշիքները խմորեցուցիչ մասունք ունին մէջերնին՝ որ կրնան ապականել կաթը, և կամ կաթնեղէնին մքլածի հոտ մը կուտան. և այս ալ յայտնի է՝ որ սերը և կաթը չոր օդոյն մէջ աւելի երկար ատեն կը պահեն իրենց անուշութիւնը ։ Տուտ չորցընելու համար նախ սպունգով ջրերը ժողվելու է և չոր լաթով նորէն սրբելու. և ետքը պատուհանները, դռները բացած օդն որ կը բանի, աղէկ մը կը ցամքի ։

Գ. Գործիքներուն լուացումն պէտք չէ ընել կաթնարանին մէջ, ինչպէս որ կ'ընեն երբեմն ոմանք. այլ լուացարանին մէջ՝ որ առանձին կաթնարանէն դուրս շինած է ։ Կաթնեղէնի գործածած ամէն ամաններն ու գործիքները պէտք է լուալ եփ ջրով՝ նախ աւելով շփելով և ետքը լաթով. ու վերջը պաղ ջրով ցօղուելով մաքուր չոր լաթով սրբ-

բելու է, ու այնպէս արևուն մէջ դնելու է որ աղէկ մը չորնայ։ Իսկ ցուրտ և մշուշ եղած օրերը կրակի քով պէտք է չորցընել։ Եւ այն ամաններն որ երկար ատեն կաթնեղինի գործածուեր են, և դարձեալ այն ամանը որուն մէջ կաթը թթուեր աւրուեր է, պէտք է տաքցընել մէջերնին մոխրաջուր եփելով, ու ետքը պէտք է աւելով շփել նոյն ջրով. և եթէ աղէկ չմաքրուի՝ նորէն շփելու է նոյնպէս տաքցուցած մոխրաջրով. ու ետքը ցողուելու է նախ պարզ տաք ջրով, ու ետքը պաղ ջրով, ու ցամքեցընելու է, ինչպէս որ վերը ըսինք։

Դ. Հեռացընել կաթնարանին քովէն ամէն տեսակ օդոյն ապականիչ նիւթերը, ինչպէս են ճախճախուտները, աղտեղութիւնները, փտութիւնները, ախոռը, և դարձեալ ծուխ և փոշի պատճառող գործքեր չընել հոնտեղուանքը։

Ե. Ոչ ոտ բան պէտք չէ խոթել կաթնարանին մէջ, որ և է կենդանի պէտք չէ խոթել. ցեխոտ կօշկով ներս չմտնել, անոր համար լաւ կ'ըլլայ կաթնարանին դրան քով փայտէ կօշիկներ դնել, ու ներս մտնելու ատեն զանոնք հագնիլ։ Դարձեալ պէտք է զգուշանալ կաթնարանին մէջ ծուխ քաշելէն և կերակուր ուտելէն. և չխոթել կաթնարանին մէջ սաստիկ հոտ ունեցող կամ թթուելու բան մը. և պէտք չէ գիշերը որ և իցէ տեսակ ճրագով ներս մտնել՝ որոնք օդը իրենց ծխովը կ'ապականեն։

Զ. Ոտ կարի քիչ անգամ պէտք է մտնել կաթնարանը. և ամառը լաւ կ'ըլլայ մտնել միայն առաւօտը և իրիկուան դէմ. իսկ ձմեռը կէսօրները։ Եւ երկայն ժամանակ պէտք չէ կենալ մէջը, մէյմը որ օդն աւելի կը տաքնայ, և երկրորդ որ շարժմունքէ պատճառած օդոյն յուզմունքը կ'արգիլէ որ սերը աղէկ չբաժնուիր. թող որ մարդուն շունչը օդը կ'ապականէ։

Է. Ինգհանուր մաքրութիւն պէտք է ըլլայ տարին անգամ մը, և եթէ հարկաւոր ըլլայ՝ աւելի յաճախ, որն որ պէտք է ընել քերելով, նորոգելով, լուալով ամէն կողմը և պատերը, որոնց ծեփն ալ պէտք է նորոգել։

Ը. Երբոր կաթնարանը մքլաճի հոտ ստացեր է և մէջի կաթը շուտ կ'ապականի, պէտք է լուալ աղէկ մը և ծծմբի ծուխ տալ, և ետքը բանալով ամէն պատուհանները թողուլ որ մէջը օդ բանի, ինչուան որ ամենևին հոտ չըմնայ մէջը։

Կը շարունակուի։

ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Ցաձկաստանի Շերասի մշակութիւնը։

Շերաս պահելու և մետաքս հանելու արուեստը Ճարտարաց ձեռքով երթալով ծաղկելու հետ է Ցաձկաստանի մէջ. այս բանս լաւ կ'իմացուի վարի դրբած ցուցակներնէս, որ հաւատարիմ աղբիւրներէ առնուած է։ Հազիւ թէ տասնըհինգ տարի մը կայ որ Ցաձկաստանէն ալ շերասի խոզակի վաճառք կ'երթայ, և ան միջոցին խաւրուած մետաքսը բոլոր բոլոր 200 հազար քիլոկրամ էր, որ միջին հաշուով, քիլոկրամին 30 ֆրանգ դնելով, 6 միլիոն ֆրանգ կ'ընէր։ Իսկ այս տարի մետաքսի և խոզակի ամբողջ գինը 27,000,000 ֆրանքի կը հասնի, որ 135,000,000 ղուրուշ կ'ընէ։ Այս բանս Ցաձկաստանի համար մեծ յառաջադիմութիւն մըն է, որ դեռ սկզբնաւորութիւն մը կրնայ ըսուիլ, վասն զի այս տարուան մետաքսին սղութիւնը թթենի մշակելու ջանքը շատ պիտի աւելցընէ։ Քանի որ դեռ Ցաձկաստանի մէջ չէր սկսած շերաս մանելու արուեստը, թթենին զուարճութեան և պտղատու ծառ մը կը սեպուէր, իսկ այսօրուան օրս շատ տեղ ամենէն շահաւոր բանը դարձած է։

Այս տարի Ցաձկաստանէն դուրս ելած մետաքսն ու խոզակը կը հաշուեն որ հետևեալ ցուցակին համեմատ ըլլայ.